

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԵՐՅՈՒՃԱՅԻ ԽԱՆՈՅԱՆ

Ծնվել է 1961թ. հունիսի 8-ին Երևանում:

1968-1978թթ. սովորել է Երևանի Դանիել Վարուժանի անվան թիվ 89 միջնակարգ դպրոցում:

1978-1988թթ. սովորել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկա-մեքենաշինական ֆակուլտետում: Մասնագիտությամբ ինժեներ-մեխանիկ է:

1978-1996թթ. եղել է Շահումյանի շրջանի բնակարանային տնտեսության վարչության ավագ ինժեներ:

1996-1998թթ. եղել է Մալաթիա-Սեբաստիա համայնքի <<Սպասարկում թիվ 7>> ՓԲԸ-ի գործադիր տնօրեն:

1998-2001թթ. եղել է Երևանի քաղաքապետարանի կենտրոնական կարգավարական ձեռնարկության փոխտնօրեն:

2001-2003թթ. եղել է Բանաքեռ - Չեյթուն համայնքի <<Երթաշարժ>> ՓԲԸ-ի տնօրենը, իսկ 2006թ.-ից՝ <<Արտասպետ>> ՍՊԸ-ի փոխտնօրենը:

2006թ.-ից <<Բարգավաճ Հայաստան>> կուսակցության անդամ է:

1996-1999թթ. եղել է Մալաթիա - Սեբաստիա համայնքի ավագանու անդամ:

2009թ. ընտրվել է Երևան քաղաքի ավագանու անդամ:

Ամուսնացած է, ունի երեք երեխա:

